«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 8 - 3

6 ապրիլի 2020 թվականի (հարցման կարգով)

«Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին

2020 թվականի մարտի 16-ին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության տեղաշարժման սահմանափակումներով և ՀՊՏՀ ուսանողների ուսումնառության իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտությունով պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Արտակարգ դրության գործողության ընթացքում «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» կատարել հետևյալ ժամանակավոր փոփոխությունները.

I. Փորձառություն

1. Փորձառության լրացված և փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությամբ վավերացված օրագրերի և փորձառության վայրի կնիքով վավերացված բնութագրի ներկայացման պահանջը **չկիրառել** 2019-2020 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի փորձառություն անցնող ուսանողների նկատմամբ:

2. Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների **«փորձառության վայրի հաճախումների»** բաղադրիչը (4 միավոր) միացնել **«փորձառության պաշտպանության»** բաղադրիչին և փորձառության գնահատման **20**

միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել **«փորձառության հաշվետվությունը»՝ 4 միավոր և «փորձառության առցանց պաշտպանությունը»՝ 16 միավոր:**

3. Հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսի և առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների **«փորձառության վայրի հաճախումների»** և **«փորձառության վայրի ղեկավարի»** գնահատման բաղադրիչները (համապատասխանաբար 15-ական միավոր) միացնել **«փորձառության պաշտպանության»** բաղադրիչին և փորձառության գնահատման **100** միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել **«փորձառության հաշվետվությունը»՝ 20 միավոր և «փորձառության առցանց պաշտպանությունը»՝ 80 միավոր:**

4. Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի, հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսի և առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների փորձառությունների պաշտպանությունը կազմակերպել առցանց եղանակով՝ Zoom համակարգով:
   4.1. UMS համակարգում ձևավորել ուսանողների փորձառությունների պաշտպանության ամփոփաթերթեր (կատարված ուղղումների համապատասխան կշիռներով)՝ առանց համարակալման և գնահատականներն անցկացնել էլեկտրոնային ամփոփաթերթերում:
   4.2. Արտակարգ դրության ավարտից հետո ամփոփաթերթերը հանձնել ՀՊՏՀ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին՝ համարակալելու և կնիքով վավերացնելու համար:
   4.3. Փորձառության առցանց պաշտպանությունը կազմակերպել ամբիոնից նշանակված բոլոր ղեկավարներից և ամբիոնի վարիչից կազմված հանձնաժողովով:
   4.4. Ապահովել փորձառության պաշտպանության ընթացքին հանձնաժողովի բոլոր անդամների համաժամանակյա ներկայությունը:
   4.5. Ապահովել փորձառության պաշտպանության ընթացքին ակադեմիական խմբի բոլոր ուսանողների ներկայությունը (խմբի բոլոր անդամներին հասանելի սոցիալական հարթակում Zoom համապատասխան տեսակոնֆերանսի հիպերհղումը զետեղելու ճանապարհով):
   4.6. Իրականացնել փորձառության պաշտպանության ամբողջ ընթացքի տեսաձայնագրություն և պահպանել ձայնագրությունները ՀՊՏՀ սերվերում:

5. Փորձառությունների պաշտպանության ընթացքի բողոքարկման նպատակով ձևավորել առցանց բողոքարկման հարթակ և դրա տվյալները հասանելի դարձնել ուսանողներին առնվազն ՀՊՏՀ կայքէջով, ֆեյսբուքյան օգտահաշվով, ինչպես նաև առցանց պաշտպանության հենց սկզբից առցանց տեսակոնֆերանսում նույնպես զետեղել հայտարարություն՝ բողոքարկման առցանց հարթակի էլեկտրոնային հասցեի վերաբերյալ:

II. Դասընթացների բազմագործոնային գնահատում

6. Առկա ուսուցման բակալավրիատի անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների **«անհատական աշխատանքի»** բաղադրիչը և դրա **2 միավոր** գնահատման կշիռը միացնել **«հաճախումների և ակտիվության»** բաղադրիչին և վերջինիս կշիռը սահմանել **8 միավոր:**

7. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2020 թ. ապրիլի 6

Երևան